զնաւսն ալայի Հ կտոր զշայխան և զղալիօնս, որք
իբրև ելին ի Պօղազէ Ը աւուրբ, Ֆռանկ նաւքն իմա-
ցեալ զգալուստ սոցա և ոչ երևեցոյց զինքեանս, մին-
չեւ ելին ի ծով։ Եւ յեղակարծ ժամու հասեալ ի վե-
բայ նաւուցն Ցաճկաց, եւ միանգամայն նոցա տայր
ափշութիւն, որ ոմանք զինքեանց նաւս հուր արկեալ
այրէին, և արքն որ ի միջի՝ ընդ նաւուցն տոչորէին
և զայրիլն լաւ համարէին քան զգերիլն։ Անդ էր եւ
տեսիլ իմն սոսկալի, զի միոյն գերիլ եւ միւսոյն այ-
րիլ ի նաւս, միոյն հեղձնուլ ի ծով և այլոցն արկեալ
զիւրեանս ի սանտալ եւ ապա գերծուին, ընդ ծով եւ
ընդ ցամաք մերկ եւ բոկ ի լերինս մոլորէին։ Եւ ողջ-
ոյն իսկ զալիոնս (պաբաղ) առեալ Ֆռանկք տանէին
ամենայն արամբք եւ կարասիւ նոցա եւ շայխայս
(պաբաղ) վարէին ընդ իւրեանս։ Եւ ապա մնացելոցն
յոյժ տանջանօք ճապաղեալ առ գերեսօքն ծովու ըստ
վերոյ յիշեցելումն, եւ ի նաւս հուր ձգեալ գործարա-
նօք այրէին. եւ այս խապէր յետ ԺԵ աւուր եկեալ։
Իսկ ի միջոցս ԻԶ Սեպտեմբերի արքայն ելեալ անդրէն
ի Ցաւուրթ փաշայէ մտանէր ի քաղաքս, զի Զչի էր որ
ի նամազ ելանէր, և եկեալ հասեալ ի թաղս Վլանկայ
կոչեցելոյ, և տեսեալ զերկուս հայս նաճարս զի գնան,
և նոցա ոչ իմացեալ՝ թէ ո՛վ ոք իցէ, և կալեալ զմինն
և տեսեալ տգեղ կերպարանօք էին և հին հանդերձիւ
և եթող զայն և զմիւսն ետես որ նոյն ձևով էր, բայց
ետես զմէստն ոտից որ դեղին էր և խիստ հին, սա-
կայն ի ցասմանէ սրտին ետ ըմբռնել խասէքոց և հրա-
մայեաց ճէլլատին որ երթայր զկնի՝ բառնալ ի կենաց
եւ զմէստ ոտիցն արկանել ի վերայ նորա, որ եւ ա-
ռարին իսկ, զոր կալեալ դահճին հարկանէր սրով եւ
ոչ հատանէր, եւ ի վայր ձգեալ զենէր[1]) հատեալ ըզ-

1) զէնէր.